

մուսլ թերութիւնը, խօսելու ու համոզուելու հերոսութիւնը. յաւելեալ՝ միշտ իրաւունք ունենալու այլապէս՝ վասպուրականեան յամառութեամբ: Յիշեց անիկա յրստակ գծագրութեամբ տիպար մը անոնցմէ, քսանէն երեսունին մէջտեղուանքը, այսինքն՝ եղծուած մը, որուն մարմինը կը մնար պատանութեան հաւատարիմ, բայց դատելու գործարանը կը մատնէր գաճաճեան սրութիւն: Նշանաբանը՝ ընդդիմադիր ըլլալ, ամէն տեղ, ամէն բանի մէջ: Աւելին՝ իր կարծիքին յարում մը մերժել, մնալու համար առանձին: Ասիկա ես ալ պիտի հաստատէի աւելի ետքը, Սուրբոյ լեռներուն մէջ ճռզած իմաստունի մը վրայ, որ բողոքականներու գոլէճներուն մէջ սորվեր էր այդ գիտութիւնը: Վիճաբանութիւնը նիւթական հացն էր անոր: Ու անկէ դադարը՝ անհանգստութիւն: Մաթիկին կարծիքով այդ մարդերը յաւիտենական տղաքներ էին, ասպարէզէն նուաճուելով շատ կանուխ ու ճռզելով՝ իմացքէ ու սիրտէ: Իր կարծիքով, ոչինչ կը հաւասարէր այդ ասպսերած արարածներուն սրտէ չորութեան: Վասպուրականէն անիկա ունէր տակաւին ուրիշ զօրաւոր զգուշութիւն մը, - Հայկական չափազանցութիւնը, որ վնասէն զատ բան չէր բերելու մեր հետապնդած դատին: Իր բառը չէ անշուշտ յեղափոխական միաստի՛քը, բայց ես հիմա կը գործածեմ զայն անկէ թելադրուած վիճակ մը տարագելու: Մեր եռանդը ու անպարագիծ նուիրումը վտանգը կը ստեղծեն կանխահաս սպառման: Պէտք է սանձել այդ տղոց հերոսութիւնը:

... Ընկեր Մաթիկը, հակառակ իմ յամառ խնդրանքներուն, ժլատ եղաւ վասպուրականեան զգայնութիւններէն: Անշուշտ, որո՞ւ մտքէն կ'անցնէր, թէ օր մը շահագործելու էի ատոնք: Այն օրերուն, անիկա անկարող էր հասկնալու բուն պատճառը իմ հետաքրքրութեանս ու իմ պնդումիս մէջ անուղղակի հտդարձ մը կը կասկածէր իր վրիպանքին: Եւ սակայն այլապէս զօրաւոր էին իմ պատճառները: Արմաշի դպրեմանքը, իմ տարուան մը ուսանողութեանս շրջանին, քսան-քսանհինգ հոգինոց